ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«12» ապրիլի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան 24 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Մարտին Վարդազարյան**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ, ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ /1978թ./, ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր /1976թ./, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ /1983թ./, պրոֆեսոր /1981թ./ Սարգիս Մուրադյանի /1927-2007թթ./ անուրանալի վաստակը հայ կերպարվեստի զարգացման գործում: Ս. Մուրադյանը 1982-1987թթ. եղել է Հայաստանի նկարիչների միության նախագահ, Երևանում հիմնադրել է «Վերածնունդ» բարեգործական կազմակերպությունը /1989-2005թթ./:

Ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն սովետի դեպուտատ /1985-1990թթ./, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր /1991-1995թթ./:

Ս. Մուրադյանն անհատական ցուցահանդեսներ է ունեցել ինչպես Հայաստանում՝ Երևանում, Էջմիածինում, Կիրովականում, այնպես էլ արտերկրում՝ Տիրանայում՝ 1961թ., Մոսկվայում, Կիևում, Թբիլիսիում, Լենինգրադում, Ռիգայում, Լեհաստանում /1979-1982թթ./: Մուրադյանն առաջիններից է անդրադարձել Մեծ եղեռնի և հայ ժողովրդի պատմական անցյալի թեմաներին: Նրա արվեստում առանցքային է ժամանակակից մարդու թեման:

Ինչպես նաև հաշվի է առնվում ՀՀ Կառավարության 06.11.2008թ. հ.1267-Ա որոշումը՝ անվանի նկարչի հիշատակը հավերժացնելու համար:

Հարցը քննարկվել է կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2010թ. ապրիլի 1-ի նիստում և քվեարկության արդյունքում անցել միաձայն:

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Մարտին Վարդազարյան**